# Հայ հերոսի անունը առհավետ գրանցված է Սևաստոպոլյան հրաձգային առաջին վաշտի ցուցակում

## ԱՅՍ ՏԱՐԻ ԼՐԱՆՈՒՄ Է ՀՈՒՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

*... Ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը փոհվեց հերոսի մահով: ՍՍՀՄ Գերագույն Սովետի նախագահության 1944 թվականի մայիսի 16-ի հրամանագրով ավագ սերժանտ Հ. Մ. Ավետիսյանին հետմահու շնորհվել է Սովետական Միության հերոսի կոչում:*

*Նրա անվերապահ նվիրվածությունը սոցիալիստական Հայրենիքին և անսահման նվիրվածությունը երդմանը օրինակ պետք է ծառայեն զինված ուժերի ամբողջ անձնակազմի համար:*

*Հրամայում եմ՝*

*Սովետական Միության հերոս, ավագ սերժանտ Հունան Մակիչի Ավետիսյանի անունը առհավետ գրանցել Սևաստոպոլյան 390-րդ հրաձգային գնդի առաջին հրաձգային վաշտի ցուցակում: Հրամանը ընթերցել բոլոր վաշտերում, մարտկոցներում, էսկադրոններում և անձնակազմերում:*

*ՍՍՀՄ Զինված ուժերի մինիստր,*
*Սովետական Միության հերոս*
*Ա. Մ. ՎԱՍԻԼԵՎՍԿԻ*



Փառաբանված կորավարի այս հավվագյուտ հրամանը, որով նա հավերժացնում է հայ ժողովրդի քաջարի զավակ Հունան Մակիչի Ավետիսյանի սխրանքը և անունը, Նովոռոսսիյսկի պատմական թանգարանի մասունքներից մեկն է: Նրա պատճենը ոսկեզօծ տառերով, կարմիր երիզով խոշոր շրջանակի մեջ փակցված է Վերխնի Բականսկի դպրոցի միջանցքում, որը կոչվում է հերոսի անունով: Այդտեղից քիչ հեռու Վերխնի Բականսկի բանավանի եղբայրական գերեզմանոցում հանգչում է հայ քաջորդու աճյունը: Նրա պատվին կանգնեցված հուշարձանին միշտ թարմ ծաղիկներ կան:

Ղափանի շրջանի Ծավ գյուղը այնքան էլ մեծ չէ, բայց այսօր նրա մասին գիտեն շատերը: Այնտեղ է ծնվել Հունան Ավետիսյանը: Նա դեռ մանկուց աչքի է ընկել իր ֆիզիկական կոփվածությամբ ու ճարպկությամբ, կենսախնդությամբ ու համարձակությամբ: Պատմում են, որ 15-ամյա Հունանը հաճախ գրազ էր բռնում ընկերների հետ, մեն-մենակ գիշերվա մթին անտառ էր գնում: Գյուղում չկար անհնազանդ ձի, որ Հունանը վարժեցրած չլիներ: Նա նաև կոխի հմուտ վարպետ էր և մրցություններում միշտ հաղթող էր ճանաչվում:

Կոմերիտական Հունան Ավետիսյանը զորակոչվում է սովետական բանակ և ծառայում է հայկական հրաձգային դիվիզիայի հեծյալ գնդում: Նա իր կադրային զինվորական ծառայությունն ավարտելուց հետո 1939 թվականին զորացրվում է և կրկին վերադառնում հայրենի գյուղ: Հետո Ծավի կոլտնտեսության առաջավոր բրիգադավար Հունան Ավետիսյանը ՀԼԿԵՄ Ղափանի շրջկոմի կոմերիտական ուղեգրով գործուղվում է Հոկտեմբերյանի շրջանի Լուկաշինի անվան նորաստեղծ սովխոզը, նշանակվում այգեգործական 4-րդ բրիգադի բրիգադավար: Որոշ ժամանակ անց այստեղ են գալիս նաև Հունանի մայրը, քույրերն ու եղբայրները:

Հունանը նոր էր ամուսնացել, երբ հեռավոր Բրեստի ամրոցում պայթեցին ֆաշիստական առաջին ռումբերն ու արկերը: Մեկ ընտանիքից վեց եղբայր՝ Աստուրը, Հմայակը, Աշոտը, Հունանը, Հայկազը և Ժորան մեկնեցին կռիվ՝ պաշտպանելու հայրենիքի ազատությունը: Ավետիսյան եղբայրներից չորսն ընկան Մեծ հայրենականի ռազմաճակատներում: Վերադարձան միայն Հմայակն ու Աշոտը:

Հունանը իր մարտական մկրտությունը ստանում է Գրոզնու մատույցներում, ուր 89-րդ հայկական հրաձգային դիվիզիան պաշտպանական մարտեր էր մղում Թերեքի ափին: Ազատագրելով Մոզդոկ, Մալգոբեկ, Պրոխլադնի և Հյուսիսային Կովկասի շատ ուրիշ գյուղեր ու քաղաքներ, դիվիզիան կատաղի մարտերով հասել է Նովոռոսիյսկի մատույցները: Ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը հարձակողական այդ գործողությունների ժամանակ իրեն դրսևորում է որպես կարգապահ, արիասիրտ կրտսեր հրամանատար, աչքի է ընկնում հակառակորդից "լեզու" որսալու, ճարպկորեն հետախուզություն կատարելու շնորհքով՝ շարունակ արժանանալով հրամանատարության խրախուսանքին:

1943 թվականի սեպտեմբերին սովետական բանակը նոր մարտեր էր ծավալում Նովոռոսիյսկ քաղաքը և Թաման թերակղզին ազատագրելու համար: Դրանք գերմանացիների "կապույտ գիծը" ճեղքելու և հիտլերականներին Կովկասից վռնդելու եզրափակիչ մարտերն էին: Ֆաշիստները մեկ տարուց ավելի էր, ինչ ամրացել էին Դոլգայա բարձունքում և այն վերածել պաշտպանական ուժեղ հանգույցի: Նրանք այստեղ ստեղծել էին դզոտերի, դոտերի, ականապատ դաշտերի, խիտ փշալարերի մի ամբողջ ցանց: Հրամանատարությունը ավագ սերժանտ Հունան Ավետիսյանին հանձնարարում է կատարել մի դժվարին առաջադրանք՝ գրոհային փոքրիկ խմբերով ճեղքել Վերխնի Բականսկի շրջանում Նովոռոսիյսկ քաղաքի մատույցները փակող Դոլգայա լեռան ֆաշիստական մի քանի ամրությունները և ճանապարհ բացել հարձակվող ստորաբաժանումների համար: Հունանը տեղատարափ կրակի տակ գրոհի է դուրս բերում իր ջոկը դեպի Դոլգայա լեռան բարձունքը, որտեղից գերմանական դզոտերը զօր ու գիշեր գնդակոծում էին 89-րդ հայկական դիվիզիայի առաջատար զորամասերի դիրքերը և խափանում նրանց մարտական գործողությունները: Գերմանական դզոտի հաստոցավոր գնդացրի անընդհատ կրակը հնարավորություն չէր տալիս դասակի զինվորներին մոտենալու լեռան լանջին: Անհրաժեշտ էր միջոցներ ձեռք առնել անհապաղ լռեցնելու թշնամու գնդացրային կրակը: Հունան Ավետիսյանը և Սագիս Սահակյանը կարճ ոստյուններով, սողեսող առաջ շարժվելով, շրջանցում են դզոտը, մոտենում մուտքին և մեկը մյուսի հետևից նետում հակատանկային նռնակները: Լսվում է ահավոր մի պայթյուն, և թշնամու երկաթբետոնե կրակակետը հօդս է ցնդում: Հաղթանակը կատարյալ էր, բայց այստեղ հերոսի մատով զոհվում է կոմերիտական Սարգիս Սահակյանը: Գրոհայինները դեռ ուշքի չէին եկել գործողությունից, երբ նրանց վրա գնդացրային կրակ է սկսում տեղալ գերմանական քողարկված երկրորդ դզոտից, որը մինչ այդ լռել էր: Հունան Ավետիսյանը չի շփոթվում: Շատ արագ կողմնորոշվելով, նա մարտիկներին հրամայում է շրջանցել հակառակորդի կրակակետը, իսկ ինքը սողեսող մոտենում է ճակատային մասից: Դեռ հրակնատին չհասած Հունանը ծանր վիրավորվում է, բայց մարտադաշտից չի հեռանում: Օրհասական պահ էր: Թանկ էր յուրաքանչյուր վայրկյանը, ամեն գնով անհրաժեշտ էր լռեցնել թշնամու կրակը, հեռացնել գրոհի ձախողման վտանգը: Զսպելով ցավերը և հավաքելով վերջին ուժերը, Հունանը նետվում է առաջ և կրծքով փակում գնդացրի շիկացած փողը: Դա Հունան Ավետիսյանի վերջին և վճռական գրոհն էր և սկիզբը երկրորդ կյանքի՝ անմահության:

Այդ օրը՝ 1943 թվականի սեպտեմբերի 16-ին սովետական կարմիր դրոշն է ծածանվում հիտլերյան զավթիչներից ազատագրված Նովոռոսիյսկ քաղաքի վրա: Այստեղից էլ սկսվում է Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի հաղթական երթը դեպի Բեռլին:

Մարտից հետո զինվորները Դոլգայա լեռան փեշերին թաղեցին Հունան Ավետիսյանին և նրա մարտական ընկերներին: Հերոսի դագաղի հետևից գնացող մարտիկների շարքերում էր նրա կրտսեր եղբայր Հմայակը: Ճակատամարտի կրակից խանձված, նա ամուր սեղմել էր Հունանի ավտոմատը և վերջին մարտից առաջ նրա գրած նամակը.

"Ծնվել եմ Ղափանի շրջանի Ծավ գյուղում, չունևոր գյուղացու ընտանիքում: Մինչև ռազմաճակատ գալս աշխատել եմ Լուկաշինի անվան սովխոզում որպես բրիգադիր: Ես կոմերիտական եմ և այսօր գրոհի եմ գնում Դոլգայա լեռան վրա: Այն անպայման կգրավենք: Այդ առաջադրանքի լուծման համար մեզնից ոչ ոք չի խնայի իր կյանքը: Հրամանատարությունը կարող է վստահ լինել այդ բանում...":

Անցել են շատ տարիներ, սակայն հերոսի անունն անմահ է: Հայրենիքը բարձր է գնահատել իր անձնուրաց զավակի սխրագործությունը: Նրան հետմահու շնորհվել է Սովետական Միության հերոսի կոչում: Ժողովուրդը հիշում ու մեծարում է Հունանի պայծառ հիշատակը: Նրա անունով են կոչվում դպրոցներ ու փողոցներ: Իսկ սևծովյան նավատորմը համալրվել է "Հունան Ավետիսյան" փոխադրանավով:

Հունան Ավետիսյանի հիշատակը հավերժացնող հուշարձաններ են կանգնեցվել նրա հայրենի Ծավ գյուղում, Ղափանում, Երևանում և այլուր:

ՍԻՐԵԼԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐ, շարունակվում է "Զարյա" թերթի բաժանորդագրությունը 2014 թվականի 2-րդ կիսամյակի համար:

**Բաժանորդագրվել դուք կարող եք փոստատարների մոտ, գյուղերի կապի բաժանմունքներում կամ թերթի խմբագրությունում:**